ԼԵՌ ԿԱՄԱՊ

Նամակ «Արևին»

Հարգելի պ. խմբագիր.

Ստացա ձեր անդրանիկ նամակը, որով ինձ կընդունիք թերթիդ գրչի զինվորներու կարգը: Վնաս չունի:Անանկ ժամանակ մը կապրինք, որ յուրաքանչյուր տղամարդ զինվոր է, գրչի կամ հրացանի:

Կգրեք՝ տեղ պիտի տաք իմ կողմե գրած ամեն մեկ անկաշառ քննադատության: Ես ալ այդ համոզումն ունենալուս համար էր, որ «Արևին» մոտեցա: Աստղաբաշխական օրենքով իսկ «Արևը» կեդրոն ըլլալու է: Ահա իմ կարծիքը «Արևի» մասին: Ասկե ավելի նպաստավոր կարծիք չի թույլատրվել հայ իրականության մեջ հայտնել մեկի մը կենդանության օրոք...

Գանք վարձատրության ձևին: Ես տողավարձեն ավելի կգերադասեմ ամսական որոշ վարձատրությունը: Տողավարձով գրողը իր շահուն ներհակ կհոչակե ձու, յուղ, ուլ, ձի, լու և նման կարճ բառեր և այն ալ ոչ այն պատճառով, որ ներկա տնտեսական տագնապին թանկ արժեն ատոնք. ո՛չ, այլ որովհետև տող լեցնելու համար բան մը շարժեն: Տողավարձով գրող վիպասան մը անկարելի է, որ իր հերոսին անուն մը փնտրելու միջոցին «Հոբը» ընտրե, «Նաբուգոդոնոսորը» թողու. վասնզի վերջինս իր պատկառելի երկարությամբ, քանի մը անգամ կրնա փաթութիլ «Հոբին» հասակն ի վեր: Նա, ով տողավարձով կգրե, հաճախ երկու անգամ կպտտցնե իր ընթերցողը նույն փողոցին մեջ, և երկու-երեք նախասենյակ մտցնելով նոր կառաջնորդե դահլիճը...

Այնպես որ, ամսե-ամիս, նայելով ֆելիետոններուս քանակին ու որակին, ղրկեցեք ինձ հասանելիք վարձատրությունը: Եվ այդ դրամը օ՜հ, ինչ անբանաստեղծական բառ... որպես գրչիս առաջին վաստակը, պիտի ուտեմ յոթը վարժապետական տարիներուս կերած... անոթությունը մարսելու համար:

Ես տաճկահայ եմ և գրած եմ տաճկահայ իրականութենե: Հայկական աղետը զիս կովկասահայ ֆրոնտը փոխադրեց: Ներկա պատերազմին մեջ ինձի համար հաղթական դուրս գալը կախված է անկե, թե ռուսահայ ազգային ջոջերը պիտի ըլլա՞ն այնքան բարի, որ ինձի քիչ մը պակասություն հայթայթեն: Պիտի ձեռնարկեմ հանգանակություն մը և յուրաքանչյուր ջոջի դուռը ծեծելով, պիտի հեծծեմ վարժապետորեն.

-Պարոննե՛ր, միք զլանար քանի մը պակասություններ նետել խեղճ երգիծաբանիս պնակին մեջ...

Ու կխոստանամ ամսե-ամիս հավաքածներուս մանրամասն հաշիվը տալ թերթերուն մեջ, և ոչ թե կարգ մը գործիչներու նման դրամները ժողվել, գրավվել, լռել ու խոկալ... Ըսենք դրամը կուտվի, բայց պակասության մասին թվաբանությունը կըսե. «Յուրաքանչյուր բացասական քանակություն՝ փոր չի կշտացներ»:

Երևան, 16 մարտի 1916թ.